ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/37

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Բնական բարիքներ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1538-2021 գրությամբ «Բնական բարիքներ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.01.2021թ.-ի թիվ 01/61-1383 գրության հիման վրա, 05.02.2021թ.-ին «Բնական բարիքներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 05.02.2021թ.-ին:

08.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/37 համարի ծածկագիրը:

18.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը 29.01.2021թ.-ի թիվ 01/61-1383 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 06.10.2020 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով Երևան քաղաքի ենթակայությամբ գործող մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-3, 7, 8, 15, 17, 22, 26, 33, 36, 44, 52, 53, 59, 60, 61, 66, 67, 68, 72, 73, 74, 96, 98, 100, 109, 110, 117-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրի օրինակները՝ հրաժարվելով սակայն ընթացակարգի 7-րդ չափաբաժնի /բուսական յուղ, ձեթ/ մասով պայմանագիր կնքելու առաջարկից /գրությունը կցվում է/:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բնական բարիքներ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բնական բարիքներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Բնական բարիքներ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1538-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն մասնակցելով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» բաց մրցույթին մի շարք չափաբաժիններով ճանաչվել է հաղթող կազմակերպություն և առաջարկ է ստացել կնքել պայմանագիր հաղթող ճանաչված չափաբաժիններով: Հաղթած չափաբաժինների մեջ էր նաև 7-րդ չափաբաժին հանդիսացող բուսական յուղը (ձեթ), սակայն տվյալ չափաբաժնի մասով ընկերությունը հրաժարվել է կնքել պայմանագիր՝ հաշվի առնելով մի շարք ծանրակշիռ հանգամանքներ:

«Բնական Բարիքներ» Ընկերությունը մասնակցելով մրցույթին ներկայացրել է նաև մատակարարվելիք ապրանքների անվանումները և արտադրող կազմակերպությունների անունները: Բուսական յուղը մատակարարելու համար մեր ընկերությունը որպես ապրանքանիշ նշել է «Դառի Կուբանի» անվանումով բուսական յուղը, սակայն մրցույթի կայացել է 2020թ-ի նոյեմբեր ամսին, իսկ պայմանագիր կնքնելու առաջարկ ստացել ենք 2020թ-ի դեկտեմբերի 28-ին: Պաջորդ իսկ օրը մենք կապվելով մեր ՌԴ գործընկերների հետ ստացել ենք ներքոհիշյալ պատասխանը.

-Այս պահին մեր գործարանը ժամանակաորապես դադարեցրել է «Դառի Կուբանի» անվանումով բուսական յուղի արտադրությունը, քանի որ գործարանի տվյալ հոսքագիծը գտնվում է վերանորոգման փուլում և շահագործման կհանձնվի 2021թ-ի ապրիլ ամսին:

Երևանի մանկապարտեզներին ապրանքներ պետք է սկսեինք մատակարարել 2021թ-ի հունվար ամսից:

Տվյալ հարցի հետ կապված «Բնական Բարիքներ» Ընկերությունը դիմում-խնդրանով դիմել է Երևանի քաղաքապետի տեղակալ Հրաչյա Սարգսյանին խնդրելով օրենքի շրջանակներում լուծում տալ այս խնդրին: Մեր Ընկերության կողմից առաջարկվել է նաև մատակարարել նույն գործարանի մեկ այլ ապրանքանիշի բուսական յուղ, որը լիարժեք կհամապատասխանի պահանջված ԳՕՍՏ-ին և տեխնիկական բնութագրին: Երևանի քաղաքապետարանից մենք ստացել ենք հետևյալ պատասխանը.

Հարցը գտնվում է գնահատող հանձնաժողովի իրավասության ներքո:

«Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն դիմել է նաև ֆինանսների նախարարություն տվյալ հարցով և ստացել է նույն պատասխանը, որ հարցը գտնվում է գնահատող հանձնաժողովի իրավասության ներքո:

Դիմել ենք նաև գնահատող հանձնաժողովին, սակայն մինչ օրս պատասխան չենք ստացել: Ելնելով ստեղծված իրավիճակից կայացրել ենք որոշում՝ հրաժարվել կնքել պայմանագիր 7-րդ չափաբաժնի մասով:

Հաշվի առնելով վերոոշյալ բոլոր հանգամանքները և փաստերը՝ «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն չնդգրկել սև ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-27-րդ, 29-41-րդ, 44-46-րդ, 49-րդ, 51-53-րդ, 55-րդ, 56-րդ, 59-63-րդ, 66-68-րդ, 72-րդ, 90-րդ և 95-123-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Բնական բարիքներ» ՍՊԸ-ն:

iii. «Բնական բարիքներ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ 3-րդ, 7-8-րդ, 15-րդ, 17-րդ, 22-րդ, 26-րդ, 33-րդ, 36-րդ, 44-րդ, 52-53-րդ, 59-61-րդ, 66-68-րդ, 72-74-րդ, 96-րդ, 98-րդ, 100-րդ, 109-110-րդ և 117-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Բնական բարիքներ» ՍՊԸ-ն:

v. 15.12.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. 18.01.2021թ.-ին «Բնական բարիքներ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի՝ բուսական յուղ/ձեթ, մասով պայմանագիր կնքելուց:

vii. Հանձնաժողովի 19.01.2021թ.-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով «Բնական բարիքներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է 7-րդ չափաժնի մասով՝ անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին:

viii. Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.01.2021թ.-ի թիվ 01/61-1383 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1538-2021 գրությամբ «Բնական

բարիքներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն 18.01.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաժնի՝ բուսական յուղ/ձեթ, մասով պայմանագիր կնքելուց, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հաշվի առնելով Մասնակցի կողմից ներկայացված գրությունը, որոշել է 7-րդ չափաժնի մասով՝ անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.01.2021թ.-ի թիվ 01/61-1383 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 19.01.2021թ.-ին՝ Մասնակցի կողմից 7-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկից հրաժարվելու հիմքով, սակայն Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 29.01.2021թ.-ի թիվ 01/61-1383 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր

հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2021թ.-ի թիվ 26/26/1538-2021 գրությամբ «Բնական բարիքներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/37 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**